ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 Հունվարի 2014թ գ.Լեռնամերձ

Հարգելի Լեռնամերձի համայնքի բնակիչների այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2013թ-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին: Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին: Վերջում կլինի հարց ու պատասխան: Այժմ ես հերթով կզեկուցեմ թե,որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1.Ֆինանսների բնագավառ:

Համայնքում 2013 թվականի ընթացքում հավաքագրվել է ընդամենը 1727.7 հազար դրամ գումար, որը կազմում է 2013 թվականի կատարողականի 105.5 տոկոսը որից

ա/ Գյուղնշնակության հողի հարկ հավաքագրվել է 655.6հազար դրամ
բ/Գույքահարկ հավաքագրվել է 534.1 հազար դրամ
գ/ Վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 163.0 հազար դրամ
դ/Պետության կողմից դոտացյա 6475.4 հազար դրամ
ե/Տեղական տուրքեր 74.9 հազար դրամ
զ/Օրենքով սահմանված դեպքում հավաքագրվել է 300.1 հազար դրամ
Համայնքում սեփական եկամուտների տոկոսը կազմում է 105.5 տոկոս, որը լավ ցուցանիշ է: Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները: Համայնքի բնակիչներին գյուղապետարանի աշխատանքների մասին իրազեկելու համար համայնքում տեղադրված է թվով 1 ցուցատախտակ, որի վրա փակցվել են համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրությունները և ավագանու որոշումները:

2.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանումը: Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար:

3. Պաշպանության բնագավառում

Բանակը պետք է ուժեղացնենք , պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչից խուսափող թվով 3 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. Երկներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության : Մեր համայնքի համար ուղղակի ամոթ է զորակոչից խուսափելը:

4. Քաղաքաշինության բնագավառ
Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի ,մենք շատ թերացումներ ունեք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից:

Համայնքում կան տներ , որոնց սեփականությունը ապահոված չէ , մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձիք կենթարկվեն պատասխանատվության:

5.Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից : Պահպանված են պատմամշակույթային հողերը:

6. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը, բայց տարվում են աշխատանքներ գյուղամիջյան ճանապարհը որի երկակությունը 1կմ է ընդգրկել որևէ ծրագրի մեջ, որպեսզի կառուցվի:

7. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ.
ա/ բուժկետից օգտվել են 840 բնակիչներ
բ/ տնային կանչեր 230
գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 80 բնակիչների այլ բուժ. Հիմնարկներում ստուգվելու համար
դ/ 2013 թվականում ծնվել են 4 երեխաներ

Բուժ. Կետի աշխատանքները համարվում են բավարար, չկան բողոքներ:

8. 2014 թվականի բյուջեն

2014 թվականի բյուջեն արդեն կազմված և ավագանու կողմից հաստատված է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1.Գյուղ տեխնիկայի ձեռքբերում

2.Համայնքի գազաֆիկացում

3.Փոստի շենքի բացակայություն

4.Գյուղապետարանի շենքի բացակայություն